

Գործուղում Մեծ Բրիտանիա, Բելգիա, Գերմանիա

(հունիսի 28-ից մինչև հուլիսի 8-ը)

2015թ. հունիսի 28-ից մինչև հուլիսի 8-ը ընկած ժամանակահատվածում *Govern* ծրագրի շրջանակներում 13 հայկական ԲՈՒՀ-երի 30 մասնակիցների, այդ թվում նաև Հյուսիսային Համալսարանի վարչակազմի 2 աշխատակիցների մասնակցությամբ տեղի ունեցան այցելություններ դեպի եվրոպական 3 ԲՈՒՀ-եր՝

- Bath Spa University, Bath UK
- UC Leuven-Limburg, Leuven, BE
- University of Koblenz-Landau, Koblenz, DE.



Այցելության հիմնական նպատակը կրում էր ծանոթության բնույթ՝ եվրոպական երկրների վարչակազմի առանձին միավորների տեղի ու դերի առանձնահատկությունների ուսումնասիրությունը կրթության

կազմակերպման ընդհանուր համակարգում:

Այցելությունները սկսվեցին *բրիտանական ԲաՖ Սպա Համալսարանից* հունիսի 28-ից մինչև հուլիսի 1-ը: Հանդիպումները շրջանակներում քննարկվեցին բուհ-երի ստրատեգիական, վարչական և ֆինանսական կառավարման առանձնահատկությունները: Իրենց հետաքրքիր զեկույցներով հանդես եկան համալսարանի պրոֆեսորներ Թ.Միդլտոնը, Ա. Սթոնը, Դ. Ռուջիերոն, Ռ. Մեարսը և ուրիշներ: Յուրաքանչյուր մասնակցի նախընտրությամբ կազմակերպվեցին այցելություններ համալսարանի առանձին վարչական միավորներ:

Հուլիսի 2-ին և 3-ին տեղի ունեցան հանդիպումներ նաև *բելգիական Լյուվեն քաղաքի UC Leuven-Limburg Համալսարանում*: Ծրագրի շրջանակներում կազմակերպվեց նաև այցելություն «Ագորա»՝ Լյուվենի համալսարանի կրթական կենտրոն և ծանոթացում կենտրոնի կրթական գործընթացի կազմակերպման շենքային և լսարանային բազային: Հանդիպումների ընթացքում ցեկույցներով ներկայացան Մ. Յորիսը, Կ. Վանսինհաուսը, Ս. Դերթը և ուրիշներ, որոնք անդրադարձան մասնագիտական զարգացման առանձնահատկություններին, Բելգիայում կրթության ֆինանսավորման ավանդույթներին, տվյալների բազայի ձևավորման անհրաժեշտության և կիրառման մոտեցումներին ու խնդիրներին:



Հուլիսի 6-ին և 7-ին ծրագրի շրջանակներում հանդիպումներ կայացան արդեն **Գերմանիայի Կոբլենց քաղաքում, տեղի համալսարանում:**

Հանդիպումների ընթացքում Կոբլենցի համալսարանի պրոֆեսոր Թ.Բուրկհարդը ներկայացրեց բարձրագույն կրթության

բնագավառում անձնակազմի կառավարման հիմնախնդիրները, այդ թվում, իրավանորմատիվային դաշտը, ձևավորված ավանդույթները, կուտակված փորձառությունները: Այնուհետև, թեմայի շրջանակներում նույն համալսարանի պրոֆեսոր Ս.Չերնիշենկոն ներկայացրեց Գերմանիայի բուհական համակարգում պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներգրավման սկզբունքները, առանձնահատկությունները: Թեմայի շրջանակներում զեկույց ունեցավ նաև Մոսկվայի կառավարման համալսարանից հրավիրված պրոֆեսոր Ե. Միտրոֆանովան, որը ներկայացրեց Եվրոպայի բուհական համակարգում անձնակազմի կառավարման ժամանակակից միտումները, առկա հիմնախնդիրները, Ռուսաստանում դրա կիրառման փորձառությունը: Ծրագրի շրջանակներում պրոֆեսոր Ս.Չերնիշենկոյի կողմից ներկայացվեց նաև Կոբլենցի համալսարանի օրինակով գերմանական ԲՈՒՀ-երի ֆինանսավորման մոդելները, մանրամասնելով պետության ֆինանսավորման, ուսման վարձավճարներից ֆինանսավորման, գիտահետազոտական աշխատանքներից ֆինանսավորման առանձնահատկությունները:

Ծրագրի շրջանակներում նաև կազմակերպվեց հանդիպում Կոբլենցի համալսարանի անձնակազմի կառավարման պատասխանատուների հետ, որտեղ քննարկվեցի կոնկրետ համալսարանի անձնակազմի կառավարման հիմնական սկզբունքները:

